ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

2022-2023թթ. ուսմնական տարվա

Ծնողների կողմից քոլեջի գործունեության արդյունավետության գնահատման վերլուծության

Ծնողների կողմից Քոլեջի գործունեության արդյունավետության գնահատման և վերլուծության հիմնական նպատակն է ռեսուրսների, ուսանողների դաստիարակության, անվտանգության, կարգ ու կանոնի, մասնագիտական հմտությունների, ուսանող-դասախոս փոխհարաբերությունների սպասելիքների գնահատումը, հետագա զարգացումը և կատարելագործումը:

Ծնողների հետ անցկացվեց հարցում քոլեջի ընդհանուր գործունեության գնահատման վերաբերյալ: Ծնողները հիմնականում շնորհակալություն են հայտնում Քոլեջում իրենց երեխաների կրթությունը բարձր մակարդակով կազմակերպելու համար: Նշում են, որ Քոլեջը հագեցած է ուսումնառության համար անհրաժեշտ ռեսուրսներով և նյութատեխնիկական բազայով, այն է պարասրահներ, սարքավորումներով հագեցած խոհանոցներ, ոսկերչական արհեստանոց, ընդարձակ դահլիճ, ռեժիսուրական լսարաններ՝ տեսախցիկներով և լուսանկարչական ապարատներով: Դասախոսները կարողանում են առաջացնել և պահպանել լսարանային հետաքրքրություն, խթանում են ուսանողների ակտիվությունը և ստեղծագործական մտածողությունը, լրացուցիչ հանձնարարություններով շահագրգռում են ուսանողներին, դասը բովանդակալից է անցնում, ուսուցման ժամանակակից և ոչ ստանդարտ մեթոդներ են կիրառում: Դասախոսները ուսանողների նկատմամբ բարեհաճ, հարգալից և բարեկիրթ վերաբերմունք են

ցուցաբերում, տիրապետում են ուսանողների հետ հաղորդակցության, լսարանում հաճելի աշխատանքային միջավայրի ստեղծմանը և պահպանմանը:

Ծնողները առաջարկում էին սպորտային միջոցառումներ և մրցույթներ հաճախակի անցկացնել: Այս հարցին հաջորդ ուսումնական տարում անպայման կանդրադառնանք:

Առաջարկում են, որ մասնագիտական առարկաները ուսումնասիրեն առաջին կուրսից սկսած: Սակայն, այս հարցի վերաբերյալ ուսումնական մասի համակարգողների հետ քննարկումների արդյունքում պարզվեց, որ ուսումնական պլանով առաջին կուրսում թույլատրվում է բացառապես հանրակրթական առարկաներ անցնել: